

*Շրջակա միջավայրի նախարարության  
«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՇԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2024*

---


*Հունվար*

*Տեղեկագիրը կազմել է ագրոոդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան*

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունվարին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել նորմայից 3-5, Լոռիում, Տավուշում, Սյունիքում՝ 1-3 աստիճանով:



Ամսվա ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 6-10-ին, 18-20-ը, առանձին շրջաններում գերազանցելով պատմական երբևէ գրանցված արժեքները. Տավուշում գրանցվել է +14...+18°C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +7...+9°C, նախալեռնային շրջաններում՝ +12...+14°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +19...+22°C, նախալեռնային շրջաններում՝ +11...+14°C, Շիրակում՝ +4...+9°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +5...+7°C, նախալեռնային շրջաններում՝ +8...+10°C, Գեղարքունիքում՝ +4...+9°C, Լոռիում՝ +11...+15°C, Արմավիրում՝ +12...+14°C, Արարատում՝ +12...+16°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +4...+6°C, նախալեռնային շրջաններում՝ +7...+9°C (Աշտարակ՝ +14°C):

Ամսվա ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 25-31-ն ընկած ժամանակահատվածում. Տավուշում գրանցվել է -7...-12°C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -13...-15°C, նախալեռնային շրջաններում՝ -7...-9°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ -8...-12°C, նախալեռնային շրջաններում՝ -11...-13°C, Շիրակում՝ -15...-19°C (Գյումրի՝ -21°C, Աշոցք՝ -32°C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ -13...-18°C (Հանքավան՝ -19°C), նախալեռնային շրջաններում՝ -10...-12°C, Գեղարքունիքում՝ -14...-18°C (Շորժա՝ -9°C, Սևան՝ -12°C), Լոռիում՝ -13...-18°C (Օձուն՝ -12°C, Տաշիր՝ -22°C), Արմավիրում՝ -10...-12°C, Արարատում՝ -9...-11°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -20...-22°C, նախալեռնային շրջաններում՝ -8...-12°C:

Ամսվա ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 31-67մմ (121-165%), Լոռիում՝ 32-54մմ (177-276%), Տավուշում՝ 36-49մմ (196-253%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 23-56մմ (118-295%), նախալեռնային շրջաններում՝ 37-59մմ (209-210%), Գեղարքունիքում՝ 32-74մմ (105-262%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 74-86մմ (143-175%), նախալեռնային շրջաններում՝ 55մմ (166%), Արմավիրում՝ 29-44մմ (140-168%), Արարատում՝ 34-42մմ (143-199%), Վայոց ձորի լեռնային

շրջաններում՝ 148մմ (222%), նախալեռներում՝ 71մմ (204%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 42-43մմ (166-293%), նախալեռներում՝ 62-66մմ (208-398%):



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են հունվարի 25-31-ին. լեռնային շրջաններում՝ -15...-20°C, առանձին լեռնային շրջաններում՝ -28...-32°C, Արարատյան դաշտում, Արագածոտնի, Վայոց ձորի նախալեռներում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ -7...-12°C:

